

Ա. ԵՐԵՄՅԱՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ*

(14-րդ դար)

3. ԿԻԼԻԿՅԱՆ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ

Կիլիկյան հայ հոյակապ նկարչական արվեստի ամենից իրապաշտ, փայլուն և ինքնատիպ դեմքերից մեկն է Սարգիս Պիծակը, որ ապրել ու ստեղծագործել է 14-րդ դարի առաջին կիսում։ Ռուբինյանց շրջանում հանդես գալով ստեղծագործական ասպարեզ, նա հայ մանրանկարչական արվեստի լավագույն արտահայտիչն է հանդիսանում, իսկ իր վրձինով Դրազարկի և Սսի արքայական դպրոցի «գերահամբաւեալ և յոյժ հմուտ նկարագրութեան արուեստի» նշանավոր մանրանկարիչը, դիմանկարիչը, գրաֆիկ նկարիչը, ոսկողը և զարդանկարիչը հռչակվում։ Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ռուբինյան մանրանկարչությունն, իր ծաղկման փայլուն նվաճումներից հետո, ապրում էր իր վերջին շրջանը, ուր ցոլանում է նաև Սարգիս Պիծակի պայծառ կերպարը։ Առհասարակ, նրա կյանքի ու նկարչական գործունեության շրջանն ամբողջովին ընդգրկում է կիլիկյան միջավայրը և դրսևորում ժամանակի տիրող գեղարվեստական իրականությունը։

Նշենք մի էական հանգամանք ևս—Պիծակի վրձինի արտադրություններն, իրենց ինքնատիպ ոճով, ժանրով և ստեղծագործական տեխնիկայով վկայում են, որ նա լավ է տիրապետել նկարչական արվեստի բազմազան ձևերին ու միջոցներին, իսկ նկարչի արվեստի ամբողջ կոմպոզիցիոն (կազմության) կառուցվածքը և ժանրային ու ոճային առանձնահատկություններն ընդգրծում են նրա ստեղծագործական խոշոր ձիրքի մասին։ Այդ արվեստում ցայտուն կերպով դրսևորվում են նաև հայ բազմահարուստ նկարչական մշակույթի լավագույն ավանդները։

Անժխտելի է և այն, որ Սարգիս Պիծակի ստեղծագործական վրձինի համարձակ թռիչքն ու որոնումները մեծապես նպաստել են նրան արվեստի բնագավառում կերտելու իր ինքնատիպ նկարչական դպրոցը, իր ուրույն ու վճիտ մանրանկարչական ոճը։ Առհասարակ, բազմազան են այն ծառայությունները, որ նկարիչը մատուցել է հայ արվեստին։

Ապրելով և գործելով «մեծափառ և հրաշակաւոր անապատ» Դրազարկում ու մայրաքաղաք Սսում, նա ոչ միայն պայքարել է հանուն հայ մասնագիտական մանրանկարչության զարգացման, այլև որպես իր կոչման բարձրության վրա կանգնած մանրանկարիչ՝ իրական կյանքը պատկերող իր մանրանկարներով և գծային նկարներով նշել է, թե նկարչության հիմնական նպատա-

* Տարունակված ամսագրի 1953 թվականի սեպտեմբերի համարից։

կը պիտի լինի կյանքի պատկերումը։ Նա առաջ է քաշել ռեալիստական արվեստի անհրաժեշտությունը։ Այդ հասկացողությամբ էլ նա վրձինել է իրական կյանքը դրսևորող մի շարք մանրանկարներ, որոնք ուշադրություն են գրավում իրենց գեղարվեստական արժանիքներով։

Այդ նկարներն առաջին հերթին փայլում են իրենց պարզությամբ, հստակությամբ ու նոր բովանդակությամբ։ Պիծակը հայ առաջին նկարիչներից է, որ վրձինել է ոչ միայն ժողովրդին հասկանալի ու հարազատ նկարներ, այլև նրան մատչելի արվեստով։ Այդ նկարներով նա հանդես է եկել որպես հա-

Կիլիկյան ճոմիվներ
Մանրանկար Սարգիս Պիծակի

սարակական նկարիչ, որն ամբողջովին համակվել է դարաշրջանի գեղարվեստական առաջավոր գաղափարներով։ Այդ մանրանկարներով նա հանդիսացել է նաև իր ժամանակի մանրանկարչության դրոշակակիրը։ Առհասարակ նա իր վրձինով մեծապես դարկ է տվել ռուբինյան շրջանի ռեալիստական նկարչությանը, հանդիսանալով նրա տաղանդավոր մի ներկայացուցիչը։

Սարգիս Պիծակի արվեստի մի այլ կարևոր առանձնահատկությունը նրա ինքնուրույն անմիջականությունն է։ Նրա մանրանկարներն իր անձնական և հասարակական ապրումների ու մտածումների գեղարվեստական արտահայտությունն են։ Նա իր ստեղծագործական հղացումները ո՛չ միայն զարմանալի վարպետությամբ կարողացել է նկարչական երանգների հիասքանչ ներդաշնակությամբ վերարտադրել և այնքան նրբությամբ օգտագործել ոսկե երանգը, այլև իր արվեստի հատուկ ձևերով և հարուստ փորձով կերտել է գեղեցիկ մանրանկարներ։ Խորացե՛ք նրա մի շարք մանրանկարների մեջ և այնտեղ պիտի տեսնեք արվեստի նրբություն, գեղեցիկ ճաշակ, հարուստ կոմպոզիցիա, ներդաշնակ գույների երաժշտություն, յուրահատուկ ոճավորություն, գունագեղություն, միաժամանակ մտքի խորություն և բանաստեղծական պատկերավորություն, հատկանիշներ, որոնք կազմում են Սարգիս Պիծակի մանրանկարչության հմայքն ու գեղեցկությունը։

Պիծակի բազմաժանր ստեղծագործությունների մեջ գրավիչ են նաև խոսուն և արտահայտիչ դիմանկարներ։ Այդ հանգամանքը վկայում են նրա գծած մի շարք դեմքերը։ Նրա վրձինի շնորհիվ է, որ այսօր ծանոթանում ենք 14-րդ դարի հետաքրքիր և պայծառ կերպարների հետ։ Այնտեղ հանդես են գալիս թագավորներ, թագուհի, կաթողիկոս, զինվորականներ։ Այնտեղ երևում են Ռուբինյան հայոց արքան՝ Լևոն Դ.ը, ժամանակի Հակոբ Բ. կաթողիկոսը, Կոստանդին Բ.ի կինը՝ Մարիամ թագուհին։

Նշանակալից է և այն, որ նկարիչը հասարակական բարձր դասի տիպարների հետ նկարել է նաև ժողովրդական խոնարհ դասի կերպարները — հովիվներ, անապատականներ, կանացի դեմքեր։ Դա Պիծակի ստեղծագործության ուշագրավ հատկանիշներից մեկն է։

Փաստ է, որ միջնադարյան հայ նկարիչներից շատերն իրենց վրձինի նյութ չեն դարձրել ժողովրդի չքավոր դասը։ Պիծակն առաջիններից մեկն է, որ սիրել և գնահատել է ժողովրդական հասարակ տիպարները։ Եվ դա հասկանալի է ու բնական։ Իբրև իսկական նկարիչ, իբրև իր փոշման բարձրության վրա կանգնած արվեստագետ, Պիծակը չէր կարող անտարբեր մնալ ժողովրդի պարզ և հարազատ կերպարների նկատմամբ։ Նա գծել է դեմքեր, որոնք բնության և աշխատանքի հարազատ դավակներ են։

Պիծակի նկարչական արվեստի շնորհիվ էլ այսօր ծանոթանում ենք ո՛չ միայն ռուբինյան հասարակության տարբեր խավերը պատկերող բնորոշ արտահայտության հետ, այլև ցայտուն գաղափար ենք կազմում դարաշրջանի տեղական տիպիկ զգեստների մասին։

«Զտարուզ զգեստուց թագաւորին, այլև զժողովրդականաց՝ ցուցցէ մեզ,— կարդում ենք Հ. Ղևոնդ Ալիշանի «Սիսուան»-

ում,— պատկեր նկարէն (... ի ծանօթ նկարչէ՝ Պիծակ Սարգսէ, որոյ էր և պատկեր Աւետարանին Դրազարկի), յորում թերևս պատուականագոյն քան զգեստուցն գրելի է մեզ ցուցակութիւն կերպարանաց Լևոն Դ., որդւոյն Օշնի, որ աներկբայօրէն իսկական կենդանագիր է թագաւորին, նկարեալ յամի 1331, յորժամ էր նա ամաց քսան և երկուց կամ երից» (էջ 481)։

Ահա թե ինչո՛ւ Սարգիս Պիծակի մի շարք նկարներն ունեն ո՛չ միայն նկարչական, այլև ազգագրական մեծ արժեք։ Առհասարակ, նկարչի վրձինի արտադրությունները, իրենց ինքնատիպ արվեստով, մանրանկարչական ուշագրավ ստեղծագործություններ են և կիլիկյան գեղարվեստի մեծ արժեք ներկայացնող նկարների շարքում կարող են ուրույն տեղ գրավել։

Անժխտելի է և այն, որ Սարգիս Պիծակը, որպես նկարչության յավագույն դրոշակակիր, միայն մեկ գերագույն նպատակ է ունեցել — հայ մանրանկարչության զարգացումն ու վերելքը։ Այդ գիտակցությամբ էլ նա վրձինել է նկարչական արվեստի նոր և արժեքավոր էջեր։ Նույնպես անժխտելի է, որ նա իր բովանդակալից գործունեությամբ և հարուստ ստեղծագործությամբ ազդեցություն է գործել հայ նկարչական արվեստի զարգացման ընթացքի վրա։ Պարզ է և այն, որ նա մեկն է ռուբինյան դարաշրջանի արվեստի վերածնության ականավոր կերտողներից, որի մանրանկարչական ժառանգության հարուստ փորձից, տեխնիկական միջոցներից ու նկարչական ինքնուրույն արվեստից երիտասարդ նկարիչները կարող են շատ բան սովորել։

4. ՆԿԱՐՉԻ ԾՆՈՂՆԵՐԸ

Սարգիս Պիծակի ծնողների մասին, դժբախտաբար, կենսագրական շատ քիչ տվյալներ կան։ Նրանց անուններն արձանագրված են Հ. Ղևոնդ Ալիշանի «Սիսուան»ի մեջ (1885 թ.) 236-րդ էջում, ուր կարդում ենք — Գրիգոր Բաճանայ — կինն Հեղինէ։

Ձեռագիր մատյանների հիշատակարաններից գիտենք նաև այն, որ նկարչի հայրը հանդիսացել է իր դարաշրջանի գեղարվեստական ձիրքով օժտված վաստակավոր մշակներից մեկը։ Հասարակական կյանքում նա փայլել է ոչ միայն որպես «պատուական վարժապետ», այլև երաժիշտ, որի հորինած նրբին եղանակները տարածվել են ժողովրդի լայն խավերում։ Նա հռչակվել է նաև որպես ճարտար գրիչ և գրչական արվեստի գծով արել է ուշագրավ նվաճումներ։ Այդ մասին վկայում են նրա ավանդ թողած ձեռագիր մատյանները, որոնք վայելուչ գրության գեղեցիկ նմուշներ են։ 14-րդ դարի այս արժեքավոր արվեստագետի մասին Հ. Ղևոնդ Ալիշանն ընդգծել է այսպիսի բնորոշ տողեր.

«Ընդ այն ժամանակս էր պատուական վարժապետն և երաժիշտն, և առաջին Բարտուղարն Սսոյ Գրիգոր, որ մակ Խուլն, որ ասեն թէ մոմ դնէր յականջն՝ առ ի չլսել զբանս աշխարհականս, վասն այն կոչեցաւ Խուլ. որ եբարձ զաւետարդն, և զպակասն լցոյց զՇարականին. որ նոյն օրինակքն կոչին Խլցկի, զոր ստուգեալ է նորա, և են Սսու բուն կոչեցեալ։ Միւս ևս արուեստ նրբալուր Խլին՝ Բարտուղարութիւն կամ գրչութիւն յոյժ ի պատուի էր և քաջ յաջողեալ ի Սիսուան, ի դրան արքունի և ի վանորայս, որոյ և կենդանի իմն վկայք մնան ձեռագիր մատեանքն»։

Ահա այս արվեստագետ հոգևորականի արժանավոր զավակն է Սարգիս Պիծակը, որ իր գեղարվեստական գործունեությամբ պատվավոր տեղ է գրավում հայ նկարչության, հետևաբար նաև մշակույթի պատմության էջերում։

5. ԻՆՉՈ՞Ւ ՊԻԾԱԿ Է ԿՈՉՎՈՒՄ ՆԿԱՐԻՉԸ

Սարգիս Պիծակը պատկանում է մեր անցյալի այն նկարիչների շարքին, որոնց կյանքի վերաբերյալ եղած տեղեկությունները խիստ աղքատիկ են և պակասավոր։ Հայտնի չէ, ամենից առաջ, նկարչի ազգանունը, ոչ էլ ծննդյան և մահվան ճիշտ թվականը։ Այդ առթիվ կան միայն որոշ տվյալներ, որոնց համաձայն նա ապրել է 14-րդ դարի առաջին կիսում։ Գիտենք նաև, որ վանական կրթություն է ստացել և իրեն նվիրել քահանայական կոչմանը, իսկ իր իսկական անունն է Սարգիս։ Այդպես էլ արձանագրել է նա իր քահանայական ինքնանկարի վերևի մասում։ Հայտնի է նաև Սարգիս Երեց անունով, իսկ իր գրած հիշատակարաններում իրեն կոչում է «սուտանուն», «Սարգիս նուաստ քահանայ», կամ իրեն նսեմացնում է որպես «անարժան», «բազմամեղ»։

Թե ի՛նչպես է ծագել նրա «Պիծակ» մականունը, այդ մասին տաղանդավոր բանաստեղծ և բանասեր Հ. Ղևոնդ Ալիշանի «Սիսուան»ի 517-րդ էջում կարդում ենք հետևյալ լուսաբանությունը.

5. Հ. Ղևոնդ Ալիշան, «Սիսուան», էջ 517։

«Թուի Սարգիսս այս նոյն ինքն ծանօթն մեր ճարտար Պիծակն, և որդի Խուլ Գրիգորի քահանայի, զորոյ և մականուան ծագումն յայտնի է, որպէս թէ երբեմն յառնելն ծաղկի և ի նկարելն, պիծակ մի նստաւ հանդէպ նմա ի լուսամուտն, որ և շուտ նկարեաց զնա, զոր տեսեալ մերձակայիցն կարծեցին թէ պիծակն եկեալ նստաւ. զոր ընդ ձեռօքն վարելն նոցա զնա, ծիծաղեալ տէր Գրիգորն, ապա գիտացին զիրն, և զարմացեալ կոչեցին զնա Պիծակ»:

Չունենք այնուհետև Սարգիս Պիծակի ընտանեկան և տնտեսական դրության վերաբերյալ ճշգրիտ տվյալներ։ Պարզ է միայն, որ իր կնոջ մահից հետո ձեռնադրվում է վարդապետ, ինչպես այդ երևում է արեղայական ինքնանկարից։ Առհասարակ, նկարչի կյանքի հետ կապված որոշ հարցեր դեռ մնում են անորոշ և մութ։

6. ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿԻ ՄԱՍԻՆ

Հայ բանասիրության պատմության մեջ Սարգիս Պիծակի մասին կարդում ենք թեև հակիրճ, բայց ուշագրավ տողեր, որոնք իրենց բովանդակությամբ որոշ գաղափար են տալիս նրա գեղարվեստական գործունեության մասին։ Այդ տեսակետից բնորոշ են Հ. Ղևոնդ Ալիշանի «Սիսուան»ի 235-րդ երեսում արձանագրված հետևյալ տողերը.

Հայ իշխան
Մանրանկար Սարգիս Պիծակի
(Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռ. № 2627)

«Արժանի յիշատակի և ծանօթութեան է վերոյիշեալ ոսկողն և ծաղկող, այն է նկարիչ՝ աւետարանին գրելոյ յամի 1325, և նախայիշելոյն ևս աւետարանի գրելոյ յամի 1331, որ առ մեզս է, անթերի ամենայն մասամբ և պէսպէս գունագեղ զարդուք, Սարգիս քահանայ կամ արեղայ, որդին Գրիգորի քահանայի և Հեղինեայ, որոյ ճարտարութեան մատանց և կերպարանի դիմաց ցուցակ լիցի պատկերս այս՝ ճշգրիտ գաղափարեալ յաւետարանէն (1331 ամի). յորում նշանաւոր է և խաչանիշ դրօշ աշտարակի տաճարաձև շինուածոյն կամ բերդին. յաւելաք յեղերս պատկերի աւետարանչին և զոմանս ի զարդուց նոյն գրոց, որ ի լուսանցս իջիցն։ Ի ստորև պատկերի Ս. Ղուկայ գրէ նկարիչն հակիրճ. «զՍարգիս անարժան քահանայ զծաղկող սուրբ աւետ. և զծն. յիշե.» ...Յաջողութեան Սարգսի յարուեստի նկարչութեան և ոսկելոյ՝ ցոյցք են և այլ ևս մատեանք... որպիսի են այլ աւետարան գրեալ յամի 1334, ի նոյն Գրիգոր գրչէ առաջնոյ աւետարանին (որ յամի 1325), յորում նոյնպէս կոչէ զինքն «Սարգիս սուտանուն քահանայ»... ծաղկօղ սուրբ տառիս և ոսկօղ»։

Տաղանդավոր մանրանկարչի մասին նպաստավոր կարծիք հայտնել է նաև արվեստագետ-բանասեր՝ Կիրիկիո Գարեգին Ա. կաթողիկոսը։ «Կաթողիկոսարանի ցուցահանդեսը» խորագրով հոդվածում նա գրել է.

«Դրազարկիզ[6]... Սարգիս Պիծակ բազմամասնակ նկարիչ, որ ի միջի այլոց ունի նկարած Լևոն Դ.ի, Յակոբ Բ. կաթողիկոսի և Մարիամ Թագուհու պատկեր-

6. Կիլիկիայի նշանավոր վանքերի շարքում իր պատվավոր տեղն ունի Դրազարկը, որ 12—14-րդ դարերի հայ մշակութային շարժման մեջ, գլխավորապես արվեստի գծով, խոշոր դեր է կատարել։ Այնտեղ ժամանակի վաստակավոր գործիչները՝ Սիմեոն, Վահան, Ավետիք («յոգնահանճար նկարակերտ»), Ստեփանոս վանական քահանան, Թորոս Հռոմկլայեցին և ուրիշներ իրենց գրած ձեռագրերով ո՛չ միայն զարկ են տվել հայ գրչական արվեստին, այլև հայ մատենագրության էջերը հարստացրել են նորանոր երկերով։ Վանքի կամարների ներքո էլ ուսել է և դաստիարակվել մի ամբողջ սերունդ։ Թերևս ընդգծված երևույթներով էլ պիտի բացատրել, որ Դրազարկն իր դպրոցով ժամանակին մեծ հռչակ ու համբաւ է վայելել։

ները... շատ նշանավոր ու բազմաշխատ նկարիչ է»[7]։

Կիլիկիո ժամանակագիր՝ Վահրամ բարոնի ևս նկարչին սեղմ տողերով հիշատակում է այսպես.

«Սարգիս երէց՝ քեռորդի Ստեփանոսի Վահկացու, աւարտեալ է զգրութիւն հրաշազան և նկարազարդ գրոցն Արարածոց, զսկզբնաւորեաւն յաւուրս Բ. Լևոնի յանկ ելեալ յաւուրս Դ.-ին»[8]։

Դավիթ մարգարե
Մանրանկար Սարգիս Պիծակի
(Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռ. № 2627)

Բանանք նաև Հ. Ս. Էփրիկյանի «Բնաշխարհիկ բառարանը» (Վենետիկ, 1902 թ.), ուր ընդգծված են հետևյալ տողերը.

«Յիշենք նաև սրբասէր քահանայն Սարգիս Պիծակ՝ որ ժամանակին հայ նկարչաց, ոսկողաց և ծաղկողաց մէջ առաջինն կրնայ համարուիլ։ Դրագարկ շէն և բարգաւաճ եղած է գրեթէ ԺԲ. դարու սկիզբէն մինչև ԺԴ. դարու կեսը»։

Կարդանք նաև բանասեր Կարապետ Հ. Բասմաջյանի «Հայոց հին գեղարվեստի վարպետները» խորագրով երկից հետևյալ տողերը».

«Գործած է 1319—1334-ին. որդին է Խուլ Գրիգոր քահանայի և իրավամբ «հռչակաւորն» կոչված է մեր հիներեն։ Գծած է կրոնական բազմաթիվ գրչագիրներու նկարները։ Ասոր ձեռքով զարդարված գրչագիր մը կգտնվի Կ. Պոլսո Խաստյուղ թաղին հայոց եկեղեցիին մեջ»։

Սարգիս Պիծակի արվեստը վերլուծել է նաև օրիորդ Սիրարփի Տեր Ներսեսյանը, որի՝ «Սիոն» ամսագրում գրած «Հայ մանրանկարչության նկարագիրը ԺԲ—ԺԴ. դարաշրջանին» խորագրով հոդվածից առաջ բերենք մի էջ.

«ԺԴ. դարու վերջերը, ազնվապետական այս արվեստը իր տեղը կուտա ավելի ժողովրդական նկարագրով նկարչության մը, որուն լիուլի բարգավաճումը գործն է Սարգիս Պիծակի։ Կարծես թե ազգային ավանդության պատկանող և Կիլիկիա ապաստանած նկարիչներն երբեմն ներմուծված արվեստը կվերածնի այդ թվականին փոքր ինչ տարբեր ձևով մը... Սարգիս Պիծակի դպրոցը ավելի կախորժի գործածելի կապադովկիական տարազները։ ԺԲ. և ԺԴ. դարերու նկարչությանց ոճը ավելի ճկուն է։ Անձերը, իրենց կանգնագեղ ձևերով, թե՛ ավելի վայելուչ և թե՛ ավելի պնսպիսուն կեցվածքներ ունին»[9]։

Չորս տարի անց, 1942 թվականին, օրիորդ Տեր Ներսեսյանն ավելի խորացնելով իր տեսակետը, «Հայաստանեայց Եկեղեցի»-ում տաղանդավոր մանրանկարչի մասին գրել է.

«... Բայց Սարգիս Պիծակի և իր աշխատակիցներու ձեռագիրներուն մեջ մարդագիրեր գրեթե չկան, բուսական և երկրաչափական մոտիվներե բաղկացած տառերը ավելի պարզ են... Սարգիս Պիծակի ոճը արևելյան դրոշմ մը ունի»[10]։

Այնուհետև, 1952 թվականին, Սիրարփի Տեր Ներսեսյանը, Հալեպում, կիլիկյան արվեստի վրա տված բանախոսության ընթացքում Սարգիս Պիծակի մասին ընդգծել է հետևյալը.

«14-րդ դարուն՝ արդյունավոր աշխատանք մը ցույց կուտա Սարգիս Պիծակ, որմե մեծ թիվով ձեռագիրներ մեզի հասած են։ Սարգիս Պիծակի համբավը տարածված է նաև Կիլիկիո սահմաններեն դուրս։ Հայաստանի արևմտյան նահանգներուն մեջ կգտնենք Սարգիս Պիծակի ձեռագրերեն մի քանին»[11]։

7. «Հասկ», 1948 թ., № 12։

8. Հ. Ղևոնդ Ալիշան, «Սիսուան», էջ 517։

9. «Սիոն», 1938 թ., № 7, էջ 218։

10. «Հայաստանեայց Եկեղեցի», 1942 թ., № 1, էջ 31։

11. «Մարմարա», № 2957, մայիս 30, 1952 թ.։

Ահա՛ «Գեղարվեստ»ի խմբագիր և արվեստագետ Գարեգին Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» խորագրով հատորը, որի 36-րդ էջում կարդում ենք.

«Հետևյալ 13-րդ և 14-րդ դարերում գեղարվեստական գրքի զարգացումն այնպիսի բարձրության է հասնում, որ ո՛չ մի տեղ և ո՛չ մի ժամանակ չէր հասել Հայաստանում։ Այս դարերը տվել են երկու խոշորագույն մանրանկարիչ արվեստագետներ՝ Թորոս Ռոսլին և Սարգիս Պիծակ, թե՛ մեկը և թե՛ մյուսը հայ գրքի մանրանկարչության արվեստը հասցրին իր գագաթնակետին։ Եղել են և այլ հայտնի մանրանկարիչներ, ինչպես՝ Հակոբ Դպիր, Ավագ, Կիրակոս և ուրիշներ»։

Կույր Հովհաննու
Մանրանկար Սարգիս Պիծակի

Արձանագրենք նաև Ռ. Դրամբյանի բնորոշումները։ 1939 թվականին Մոսկվայում, ռուսերեն լեզվով հրատարակված «Պատկերներ Հայաստանի արվեստի պատմությունից» խորագրով գրքում (էջ 19—23) նա գրել է.

«Սարգիս Պիծակի մանրանկարները (մինիատյուրները) համեմատաբար ավելի կոպիտ են, շոր և անկյանք։ Աչքի խփում են մարդակազմական սխալները, միշտ չափազանցրած կերպով մեծ են գլուխները։ Սարգիս Պիծակն իր ժամանակին եղել է հայտնի նկարիչ և, ինչպես երևում է, շատ արդյունավետ։ Նրանից զարդանկարված բավական ձեռագրեր են մնացել։ Նա ներկայանում է այն ժամանակ, երբ կիլիկյան արվեստը գտնվում էր իր անկման շրջանում։ Անհասկանալի է, թե ինչի վրա է հիմնված այս փաստը, որ տրադիցիոն կերպով պահպանվում է մինչև օրս։ Այս բոլորը անհասկանալի են»։

Նույն գրքի 23-րդ էջում Ռ. Դրամբյանն իր կարծիքն ավելի է զարգացրել.

«Ռոսլինից հետո եկող նկարչական սերնդի մեջ Սարգիս Պիծակն է. իր մասին արդեն հիշել ենք և որի աշխատանքն արդեն տալիս են կիլիկյան արվեստի անկման նշանները։ Մենք կարող ենք լրիվ պատկեր կազմել բավականին միակերպ նկարչի մասին իր շորս աշխատանքներից, որոնք պատկանում են տարբեր շրջանների, 1320—1352 և որոնք գտնվում են Երևանում։ Սարգիս Պիծակը հանդիսանում է շարունակողը կիլիկյան արվեստի ա՛յն գրաֆիկական ճյուղի, որին պատկանում է Մարտիրոս նկարիչը, Ավետարանի հեղինակը, որը գտնվում է Հայաստանի կերպարվեստի պետական թանգարանում, № 78, և Սարգիս Պիծակի հայրը՝ նկարիչ Գրիգորը։ Պիծակը բավական միակերպ նկարիչ է, որը միևնույն ձևերն է օգտագործում։ Նրա մոտ դեմքերը կատարված են կաղապարային ձևով, մեկը նման է մյուսին, երիզված ուրվագծով։ Նրա մոտ գույների ներդաշնակությունը շատ աղքատ է (երկնագույն, մոխրագույն, կանաչ), ոսկու գործածությամբ»։

Առաջ բերենք նաև երիտասարդ բանասեր Պերճ Էրզյանի բնորոշումը։ Պոլսում հրատարակվող «Սուրբ Փրկիչ» խորագրով ամսագրում «Հայ նշանավոր մանրանկարիչ Սարգիս Պիծակի անհայտ մեկ գործը» հոդվածում (1950 թ., Ա. տարի, № 9) նա գրել է.

«... Պիծակի արվեստը լի է նորանոր յղացումներով և գույներու հիանալի ներդաշնակությամբ... Պիծակի գիծերը քընքույշ են ու ակնահաճո, ոճավորված ծաղիկներուն և տերևներուն ու մոտիվներուն մեջ կան այլազանություն, բայց ոչ մեկ տեղ չափազանցություն կամ խճողում։ Անզուգական այս արվեստագետը գույներու՝ լավ վարպետ մըն է միանգամայն... Ներկա գործին մեջ կտիրապետեն նախ ոսկեգույնը, ծիրանի կարմիրը, կապույտը և ձիթենիի կանաչի զանազան երանգավորումները, սրճագույնը, ճերմակը և այլն։ Պիծակ զարդանկարներու առընթեր, մեծ վարպետություն ցույց տված է նաև մարդկային նկարներու մեջ»։

(Շարունակելի)